

1
9

ՀԱՅ

ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ



Ա. Ռ. Ժ. Ա. Մ. Ե. Ա. Յ.

Handwritten: Գալիսիա
916

ՇԱԽԱԳԻԾ ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



1920

Handwritten: Պրիստիպ Գ. Զոհրապետյան

807

UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY



ԱՌԺԱՄԵԱՅ ԾՐԱԳԻՐ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Հայ Ռամկավար կուսակցութիւնը կազմուած է 1908 թուականին, միացումով Արմենական (հիմն. 1888ին) և Վերակազմ. Հնչակեան (Աղդեան հատուած) կուսակցութեանց :

Հայ Ռամկավար կուսակցութիւնը իր կազմութենէն յետոյ տարածուած էր Թուրքիոյ, Ամերիկայի, Եգիպտոսի և Եւրոպայի գաղութներուն մէջ :

Օսմանեան սահմանադրութեան շրջանին Հայ Ռամկավար կուսակցութիւնը ամենակարեւոր դեր կատարեց ազգային, կրթական և բարեգործական ձեռնարկներուն մէջ : Ատանայի ջարդէն յետոյ Ռամկավար կուսակցութիւնը իր հաւատքը կորսնցուցած ըլլալով Թուրքիոյ քաղաքական վերանորոգումի հնարաւորութենէն, հայ ազգի ֆիզիքական գոյութեան

պահպանումը անոր տնտեսական ու մտա-
ւոր զարգացումի խաղաղ ու սխաթեմաթիք
աշխատանքին մէջ փնտռեց : Այս տեսա-
կէտի հիման վրայ էր որ ո՛ր և է կապ
չուզեց հաստատել տիրող օսմանեան-
թուրք կուսակցութեան հետ և ոչ մէկ
քաղաքական գործունէութիւն չուզեց
ստանձնել , և հակադիր ու քննադատ
ուղղութիւն մը բռնեց անոնց հանդեպ ,
որոնք գործակցութիւն ստեղծած էին
թուրք կուսակցութեանց հետ :

Հայ Ռամկավար կուսակցութիւնը երե-
ւան եկաւ Ազգ. Երեսփ. Ժողովին մէջ «Կեդ-
րոնի կուսակցութիւն» անուան տակ և իր
ամբողջ ուշադրութիւնը լարեց պահպանե-
լու ազգային իշխանութիւնը և անոր հմայ-
քը , և կանոնաւորելու կրթական ու բա-
րենպատակ բոլոր հաստատութիւնները՝ վեր
ամէն կուսակցական նկատումներէ ու ան-
հատական շահագործումներէ : Իբ թեկնա-
ծուն Ջաւէն Արքիպիսկոպոսը Պատրիարք
ընելով , յաջողեցաւ դօրավիզ հանդիսա-
նալ Եւրոպայի Ազգային Պատուիրակու-
թեան և անոր բոլոր ջանքերուն՝ Հայաս-
տանի բարենորոգմանց խնդրոյն մէջ :

Հայ Ռամկավար կուսակցութեան ան-

դամ կարեւոր մտաւորականները մտնելով
Հարկ. Բարեգործ. Ընդհ. Միութեան և
Միացեալ Ընկերութեանց Վարչութեանց
մէջ, ամենաարդիւնաւոր աշխատանքը
Նուիրեցին Հայաստանի Հայութեան կրթա-
կան, անտեսական ու առողջապահական
վիճակի բարձրացման գործին: Եթէ պա-
տերազմը չգար խանդարելու այս երկու
հասարակական խոշոր հաստատութեանց
աշխատանքը, հայ ազգը իր մտաւոր ու
անտեսական մակարդակի բարձրացումով
տէրը պիտի դառնար իր իրաւունքներուն
իր հայրենի երկրին մէջ: Ռամկավար կու-
սակցութեան ղեկավար շրջանակներու խո-
րին համոզումն էր թէ այս ուղղութեամբ
տարնուած աշխատանքը ամենազօրաւոր
յեղավտխական գործն էր որ կը կատար-
ուէր հայ ժողովուրդի փրկութեան համար:
Պատերազմի ընթացքին Հայ Ռամկա-
վար կուսակցութիւնը անտարբեր չմնաց
ազգային պարտականութեան կատարման
գործին մէջ: Երբ ինքնապաշտպանութիւն
պարտադրուեցաւ Վասպուրականի հայ ժո-
ղովուրդին, Ռամկավար կուսակցութիւնը
ամենապատուաւոր տեղ գրաւեց Վանի և
Շատախի կռիւներուն մէջ: Վանի կռիւնե-

բու զինուորական հրամանատարութիւնը
ստանձնեց իր ընկերներէն Արմենակ Եկար-
եան և հրապարակ բերաւ աւելի զէնքի
ուժ քան միւս կուսակցութիւնները :

Ամերիկայի մէջ, Եգիպտոսի մէջ Հայ
Ռամկավար կուսակցութեան մասնաճիւ-
ղերը Ազգային Միութեան մէջ, իրենց
մասնակցութեան լայն բաժինը բերին ոչ
միայն ազգային դատի պաշտպանութեան
բրտրականտայի գործին, այլ և մտնելով
կամաւորական շարքերու մէջ, կռուեցան
դաշնակից բանակահորու կողքին՝ Պաղես-
տինի և ուրիշ ճակատներու վրայ :

Կովկասի մէջ, Վասպուրականի առա-
ջին նահանջէն յետոյ, Հայ Ռամկավար
կուսակցութիւնը կազմակերպեց Հայաս-
տանի Վերաշինութեան Յանձնաժողովը,
և Արմենակ Եկարեանի հրամանատարու-
թեամբ կազմուած պահակախումբով մը
գաղթականութիւնը առաջնորդեց դէպի
հայրենի երկիրը և հոն ձեռնարկեց վերա-
շինութեան գործին :

Կովկաս ապաստանած գաղթականա-
կան գործի կանոնաւորման համար Հայ
Ռամկավար կուսակցութիւնը համերաշխ
Հ. Յ. Դաշնակցական կուսակցութեան հետ

հրաւիրեց արեւմտահայ քօնֆէրանսը, և ընտրեց Արեւմտահայ Խորհուրդը, որում էջ Ռամկավարները ունեցան իրենց գործօն ներկայացուցիչները:

1917 Դեկտեմբերին երբ ուսւ ընտրեցին կողմնակապակցութեան ճակատը լքելով կը հեռանար, գաղթականութիւնը նոր քօնֆէրանսով մը ընտրեց Հայաստանի Ազատութեան Խորհուրդը, կազմակերպելու համար Հայաստանի Ազատութեան ընտրեցին գործաւոր Անդրանիկի հրամանատարութեամբ: Ռամկավարութեան ամենալայն ու գործօն մասնակցութիւն ունեցաւ Հայաստանի Ազատութեան Խորհուրդի և թէ ընտրեցին կազմութեան մէջ: Ռամկավար ընկերներէն շատերը հերոսաբար ինկան Ռատանի, Առնիսի, Օրկօֆի և Խնուսի կռիւներուն մէջ: Միայն Օրկօֆի հերոսական դիմադրութեան մէջ նահատակուեցան յիսունը չորս կազմակերպուած ընկերներ, որոնց մէջ՝ Վան-Տոսպի խմբադիր Վարդան Պապիկեան:

Հ Ա Յ Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Կ Ա Ն

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

1917ին Թիֆլիսի մէջ շարք մը ակա-
նաւոր հայ մտաւորականներու և մասնա-

ւորապէս «Մշակ»ի նահատակ խմբագիր
Համբարձում Առաքելեանի ջանքերով կազմուեցաւ
Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը:
Մինչեւ այդ ատեն Ռուսիոյ Հայութեան մէջ տիրապետող միակ կուսակցութիւնն էր
Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ իր մէջ կը պարունակէր հայ Ժողովուրդի գրեթէ բոլոր խաւերը: Թէեւ զօրաւոր հասանքներ գտնուած են այդ կուսակցութեան ծրագիրի և մասնաւորապէս գործելակերպի ու վարած քաղաքականութեան դէմ, սակայն Հայ Ժողովրդական կուսակցութիւնը առաջին Ռուսահայ կազմակերպութիւնն էր, որ ասպարէզ կ'իջնէր որպէս կազմակերպուած հակամարտ ուժ:

Հայ Ժողովրդական կուսակցութեան կազմութեան առաջին օրէն իսկ Հայ Ռամկավար կուսակցութիւնը իր բոլոր ուժերը ի սպաս դրաւ անոր ծաւալումին ու տարածման: Հայ Ժողովրդական կուսակցութեան առաջին տարածիչներն ու կազմակերպիչները ռամկավար ընկերներ եղան, մասնաւորաբար գաւառական քաղաքներու մէջ:

Ինկատի ունենալով որ Հայ Ռամկավար կուսակցութիւնն ու Հայ Ժողովրդա-

կան կուսակցութիւնը թէ ծրագրով և թէ գործելակերպով միեւնոյն ուղղութիւնը կը ներկայացնէին, երկու կուսակցութեանց կեդրոնական վարչութիւնները կատարեալ համաձայնութիւն ու գործագցութիւն ստեղծեցին պաշտօնագրով մը երկու կողմէն ստորագրուած :

Անուանակոչութեան տարբերութիւնը քաղաքական նկատումներով էր որ պահուեցաւ : Միեւնոյն ժամանակ համաձայնութեան պայմաններէն մին էր որ բոլոր այն խնդիրներու մէջ որ, Արեւմտահայութեան կը պատկանէր, վճառական ձայնի իրաւունք տրուէր Հայ Ռամկավար կուսակցութեան Հայաստանի Խորհուրդին, իսկ այն հարցերու մէջ որ Ռուսահայութեան կը վերաբերէր՝ Հայ Ժողովրդական կուսակցութեան կեդրոնական Կոմիտէին :


Երկու կուսակցութիւններն ալ իրենց օրակարգի վրայ ունին վերջնական ձուլումի և մէկ անուան յայտարարութեան խնդիրը, մանաւանդ որ Անկախ և Միացեալ Հայաստանի ստեղծումով կը ցրուին անջատ գործունէութեան քաղաքական պատճառները :

Մօտերս հրաւիրուած կուսակցութեան
Պատգամաւորական ժողովը վերջնական
լուծում պիտի տայ այս խնդրին :

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Յ Ի Ի Ն Ն Ե Ր

Ռամկավար կուսակցութեան հրատա-
րակութիւններն են ժողովուրդի Ձայնը՝
Կ. Պոլսոյ մէջ. Ռամկավար (այժմ դադ-
րած) և Վերածնունդ Պոլսոյ մէջ (այժմ
Երեւանի մէջ) : Վան-Տոսպ Վանայ, ապա
Թիֆլիսի և այժմ Երեւանի մէջ Հայաս-
տանի Ձայն անունով, Հայ Ձայն Կիլիկիոյ
մէջ, Ազգ օրաթերթ՝ Պօսթօնի մէջ, Նոր
Կեանք՝ Գալիֆօնիոյ մէջ. Արեւ Ալեք-
սանդրիոյ մէջ, Լուսարձակ պարբերականը
Վառնայի մէջ :

Հայ ժողովրդական կուսակցութիւնը
կը հրատարակէ Մշակ օրաթերթը Թիֆ-
լիսի, ժողովուրդ օրաթերթը Երեւանի,
Նոր Կեանք Ալեքսանդրապօլի և ժողո-
վուրդ Շուշիի մէջ :



ՀԱՅ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԲԼԱՏՖՈՐՄԸ

Հայ Ռամկավար կուսակցութիւնը կ'ընդունի տէմոքրատիք սկզբունքները :

Իր նշանաբանն է. Ամէն բան ժողովուրդով, ժողովուրդին հետ եւ ժողովուրդին համար :

Կը հաւատայ ազատութեան, իրաւունքի եւ արդարութեան տիրապետութեան :

Ըլլալով ապառասակարգային, չի պաշտպաներ եւ ոչ մէկ դասակարգի մասնաւոր շահերը, եւ հիմնուելով բնաշրջական (évolution) տեսակէտի վրայ, կը հաւատայ թէ աշխատանքի ու վարձատրութեան արդար բաշխումով՝ դասակարգերը դոյութեան իրաւունք չպիտի ունենան ապառայ անկախ Հայաստանի մէջ : Չընդունիր ոչ մէկ անհատի կամ դասակարգի համար ո՛ր եւ է առանձնաշնորհում :

Հողը պիտի պատկանի աշխատաւորութեան եւ մասնաւոր օրէնքներով պիտի ապահովուին դիւղացիին հողատիրութեան սեփականութեան մշտական իրաւունքը :

Անմշակ հողերը պետական կը համարուին և պետութիւնը միայն իրաւունք ունի զանոնք շահագործման տալու և կամ վստառելու օրէնսդիր մարմնի մշակած և ընդունած մասնաւոր օրէնքներուն համաձայն : Հողի սեփականութեան մինիմօմը և մաքսիմօմը կ'որոշուի մասնաւոր օրէնսդրութեամբ :

Կը հաւատայ և ուժ պիտի տայ լայն ծաւալով կազմակերպուած գործակցական (coopérative) միութիւններու :

Աշխատաւորութեան շահերը պիտի պաշտպանուին պետական մասնաւոր օրէնքներով : Կ'ընդունի ութը ժամու աշխատանքը ու արտադրութեան չափանիշով պետութենէն նշանակեալ վարձատրութիւն : 14 տարեկանէն վար տղայոց աշխատութիւնը արգիլուած է : Կանանց աշխատանքը մասնաւոր օրինաց ենթակայ է : Աշխատաւորը ապահովագրեալ պիտի ըլլայ արկածի ու մահուան դեմ :

Աշխատաւորութեան գործադուլի իրաւունքը արդար կը համարուի : Բանաւորական և գործատիրական իրաւունքները պաշտպանուած են պետական և միջազգային օրէնքներով :

Բոլոր բնական մօնօրօյները — հանք, երկաթուղի, հեռագիր, ոռոգում, ջուր, թէլէֆօն, ելեքտրաուշարժ եւ այլն պետական են և կամ քաղաքապետական (municipal) և ըստ պատկանելոյն պետութիւնը և քաղաքը միայն իրաւունք ունին օրէնսդիր մարմիններու որոշումով ժամանակաւորապէս անոնց շահագործումը տալու մասնաւոր ընկերութեանց և կամ անհատներու :

Երկրի պետական ձեւը կ'ընդունի հանրապետութիւն, որ պիտի ունենայ իր նախագահն և Երեսի ժողովը՝ ընտրուած ժողովուրդի ընդհանուր, ուղղակի, գաղտնի և համեմատական քուէով : Գործադիր մարմինը (կառավարութիւնը) պատասխանատու է Օրէնսդիր մարմնին առջեւ :

Դատաստանական բաժինը պիտի կազմուի անկախ և անձեռնմխելի : Կ'ընդունուի երդուեալ դատաւորներու (jury) դրութիւնը :

Նախնական կրթութիւնը պարտաւորիչ է. և թէ՛ նախնական, թէ՛ երկրորդական և թէ՛ բարձրագոյն կրթութիւնը ձրի՝ Հայաստանի բոլոր քաղաքացիներուն համար :

Անձի և բնակարանի անձեռնմխելիութիւնը, խօսքի, մամուլի և ընկերակցութեանց ազատութիւնը, Հայաստանի հիմնական օրինաց մաս պիտի կազմեն :

Տուրքերը պիտի հաստատուին օրէնսդիր մարմնի որոշումով, պիտի ըլլան ուղղակի և յառաջատուական :

Հայ Ռամկ. կուսակցութիւնը Հայաստանի Հիմնադիր Ժողովի գումարումին՝ իր սկզբունքները ընդլայնելով և մանրամասնելով պիտի պաշտպանէ և զանոնք Հայաստանի հիմնական ու սահմանադրական օրինաց մէջ պիտի մտցնէ :

ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ ԵՒ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Հայ Ռամկ. կուսակցութիւնը կը մերժէ բոլոր յեղափոխական մեթոտները քաղաքական կեանքի մէջ, և իր սկզբունքներուն ու նպատակներուն իրականացման համար կ'ընդգրկէ խօսքի և գրի գաղափարատարածման միջոցները : Իր բոլոր բլատֆօրմները ու քաղաքական ծրագրերը լայնօրէն հրատարակութեան տալով կ'ենթարկէ ժողովրդական հանրաքուէի (րէֆէրէնտումի), զանոնք օրէնսդրական կեանքի մէջ մտցնելէ առաջ : Ընտրական պայքարի

և կուսակցական գործունէութեան իր
բոլոր հաշիւներն ու տեղեկագրերը պար-
բերաբար հրատարակութեան կուտայ,
զանոնք յանձնելով ոչ միայն կուսակցու-
թեան անդամներուն, այլ նաեւ ընդհանուր
ժողովուրդի քննութեան ու գնահատման :

ՀԱՅ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Բարիւղ գումարուած Ազգ. Համա-
գումարին առջեւ Հայ Ռամկավար կու-
սակցութիւնը իր անդամ պատգամա-
ւորներու միջոցաւ պիտի պաշտպանէ հե-
տեւեալ պահանջները Հայաստանի անկա-
խութեան և կազմութեան մասին :

1.— Անկախ (indépendant) Հայաս-
տանի կազմութիւնը պատմական Հայաս-
տանի սահմաններու մէջ. այսինքն Ռու-
սահայաստան, Թրքահայաստանի վեց վի-
լայէթները միացած Սեւ Ծովի ափերով,
Պարսկահայաստան և Կիլիկիա՝ Ալեքսան-
տրէդի և Մէրսինի նաւահանգիստներով :

2.— Մերժել ո՛րեւէ մշտական թե-

Լարկութիւն Հայաստանի վրայ, միայն ջանալ ապահովել Դաշնակից պետութիւններու հաւաքական եւ կամ անոնցմէ միոյն բարոյական եւ տնտեսական պաշտպանութիւնը, առժամապէս :

3.— Ի նկատի ունենալով որ Ռուսիա քաղաքականապէս եւ տնտեսապէս քայքայուած է եւ անոր վերականգնումը երկար ժամանակի կարօտ, եւ ի նկատի ունենալով որ ռուս բանակը լքելով կովկասեան ճակատը Հայ ժողովուրդը մինակ ծառայաւ թշնամիին դէմ եւ իր արեան գնով պաշտպանեց իր հայրենի երկիրը, մերժել ո՛ր եւ է կապ ունենալ Ռուսիոյ հետ Անդրկովկասի մէջ :

4.— Կազմութիւն առժամեայ հայկական կառավարութեան, իբրեւ արտայայտիչ հանուր Հայութեան ձայնին, եւ անոր ճանչումը Դաշնակից պետութեանց կողմէ, իբրեւ պատերազմի եւ դաշնակից պետութիւն, եւ ընդունիլ տալ Հայոց կողմէ պաշտօնական ներկայացուցիչ Հայտութեան ժողովին մէջ :

5.— Ազգերու Դաշնակցութեան մէջ ընդունիլ տալ եւ Հայաստանը :

6.— Մասնաւոր եւ սերտ յարաբերու-

Թիւն մշակել և մասնաւոր համաձայնու-
թիւն կնքել դրացի Քրիստոնեայ պետու-
թեանց և մասնաւորապէս Յունաստանի և
Վրաստանի հետ :


7.— Վերջնական ու բացարձակ բա-
ժանում թրքական իշխանութենէ : Մեր-
ժում ո'ւէ քաղաքական կամ կրօնական
աննշութեան թուրք կառավարութեան , և
Հայաստանի սահմաններուն մէջ մնացած
խալամներու միջեւ :

8.— Անմիջական գրաւում թուրքերու
ձեռք մնացած հայ հողամասերուն հայ
դինուորներով և Դաշնակից ուժերու
աջակցութեամբ : Դիւրութիւններ ընծայել
տարագրավայրերու , գաղութներու կամ
թրքական լուծին տակ մնացած վայրերու
Հայութեան դէպի Հայաստան մեկնումին
և տեղաւորմանը :

9.— Մերժում թուրքիոյ հանրային
պարտքէն Հայաստանի անցած նահանգ-
ներուն վրայ ինկած ո'ւէ բաժնի , անկա-
րելիութեան պարագային , մերժել մաս-
նակցիլ այն պարտքերուն , որոնք վերջին
պատերազմի թուականէն սկսած են :

10.— Քաբիթիւլասիօններէ օգտուելու
իրաւունք թուրքիոյ թողուելիք հողամա-

2015



սերուն մէջ մուսցած հայ հպատակներուն :

11.— Հայ մարտիրոսագրութեան թելադրիչներուն և կազմակերպիչներուն համար դատաստան՝ Դաշնակիցներու կողմէ նշանակուած լիազօր դատարաններու առջեւ :

12.— Անդամատեալ թուրքիոյ զանազան կողմերը գտնուող Հայերը Հայաստանի բնիկ (originaire) համարուին և ըստ այնմ անոնց հաւաքական հպատակութիւնը (naturalisation) հաշտութեան դաշնագրին մէկ տրամադրութիւնը կազմէ : Արտասահման գտնուող թրքահպատակ հայերը՝ Հայաստանի անկախութեան հռչակմամբ ինքնին Հայ պետութեան քաղաքացիութիւնը կը ստանան :

13.— Հայկական հարստահարութիւնները թուրք կառավարութեան գործը ըլլալով, թուրք պետութիւնը ստիպուած է հայոց անհատական կորուստները (նիւթական թէ մարդկային) հատուցանել : Հատուցանելի ամբողջական գումարը կ'որոշուի միջազգային յանձնաժողովի մը կողմէ և հայկական կառավարութիւնը ինք կ'ըստանանձնէ իւրաքանչիւր հայ անհատի ենթարկուած վնասները ճշդել և նոյն գումարէն վճարել :

14.— Հայկական նահանգներուն մէջ գտնուող Էվգաֆի շարժուն եւ անշարժ հարստութիւնը Հայկական կառավարութեան կը փոխանցուի՝ իբր փոխարինութիւն այն նահանգներու հայ հասարակութեան ենթարկուած մլնասներուն (եկեղեցի վարժարան, վանք եւլն) :

Այս մանտաները դրկելով՝ Ռամկավար կուսակցութիւնը Բարիզի քոնֆէրանսին մասնակցող ռամկավար անդամներուն մասնաւորապէս կը թելադրէ ամէն բարոյական ու նիւթական աջակցութիւն ընծայել Ազգային Պատուիրակութեան նախագահ Պ. Նուպարի եւ զայն ընտրել իւրեւ հայութեան ներկայացուցիչ Հաշտութեան Համաժողովին :

Կուսակցութեան ներկայ պահանջները նման են այն պահանջներուն, որոնք ազգային իշխանութեան կողմէ ներկայացուած են Բարիզի Համախորհուրդին՝ մասնաւոր պատուիրակութեան մը միջոցաւ :

ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Հայ Ռամկավար կուսակցութիւնը կ'ընդունի համերաշխ գործակցութեան սկըզբունքը միւս հայ կուսակցութեանց և

հոսանքներու հետ և իր բոլոր ուժերը
պիտի լարէ ազգային խնամատարութեան
գործի բարւոք մատակարարումին և Դաշ-
նակից պետութեանց ներկայացուցիչներուն
հետ սերտ յարաբերութեանց մշակումին :



ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ



Յօդ. 1. — Հայ Ռամկավար Կուսակցութիւնը ունի՝ Ա. Կեդրոնական Խորհուրդ, Բ. Նահանգային խորհուրդներ, Գ. Տեղական ակումբներ, Դ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով, և Ե. Նահանգային Ընդհանուր Պատգամաւորական Ժողովներ :

Յօդ. 2. — Հայ Ռամկավար Կուսակցութեան կեդրոնն է Հայաստանի մայրաքաղաքը, ուր կը գտնուի Կեդրոնական Խորհուրդը :

Յօդ. 3. — Նահանգային խորհուրդները կը գտնուին նահանգային կեդրոնական քաղաքներու մէջ :

Յօդ. 4. — Հայ Ռամկավար կուսակցութիւնը ունի իր մասնաճիւղերը արտասահմանի մէջ, որոնք կը կառավարուին առանձին կազմական կանոնադրով յարմարցուած տեղական պայմաններուն :

ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹԻՒՆ

Յօդ. 5.— Ամէն հայ քաղաքացի կըր-
նայ անդամակցիլ Հայ Ռամկավար կու-
սակցութեան, առանց դաւանանքի, սեռի
և դասակարգի խտրութեան :

Յօդ. 6.— Անդամակցիլ փառաքողը
նախապէս կը ներկայացուի երկու ան-
դամներու կողմէ և Ակումբին ղիւանը,
յետ քննութեան, կ'ընդունի խնդրարկուն
իր անդամ :

Յօդ. 7.— Ամէն անդամ պարտի
ստորագրուիլ մասնաւոր տոմարի մը մէջ՝
ընդունելով կուսակցութեան ծրագիրը և
կանոնագիրը, և խոստանալով օգտակար
ըլլալ անոր նպատակին նիւթական և բա-
րոյական աջակցութեամբ :

Յօդ. 8.— Իւրաքանչիւր անդամ կը
վճարէ Ա. մուտքի տուրք և Բ. մէկ
ամսաբաժին, որոնց քանակութիւնը կու-
րոշուի տեղական ակումբներու մողմէ :

Ամսավճարէ զերծ են այն անդամները որոնց
նիւթական անձկութիւնը կը հաստատուի տեղա-
կան Ակումբին կողմէ :

Յօդ. 9. — Ամէն անդամ մէկ ձայն միայն ունի, ինչ որ ալ ըլլայ իր վճարած ամսաբաժինը :

Յօդ. 10. — Պատիւը արատաւորող արարքի մէջ գտնուող և կամ կուսակցութեան սկզբունքներուն դէմ գործող ո՛ր և է անդամ կ'արտաքսուի կուսակցութենէն, յետ քննութեան : Արտաքսումը կրնայ վերաքննելի ըլլալ և կը յանձնուի կեդրոնի որոշման :

ՏԵՂԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ

Յօդ. 11. — Տեղական Ակումբ մը կը կազմուի առնուազն 15 անդամէ :

Յօդ. 12. — Տեղական Ակումբները իրենց շրջանակին մէջ ինքնավար են . կը գործեն իրենց պատասխանատուութեան տակ, կուսակցութեան անունով, բայց կը ներկայացնեն միայն իրենց շրջանակի անդամներուն կարծիքը :

Յօդ. 13. — Տեղական Ակումբները իրենք կը պատրաստեն իրենց ներքին կանոնադիրը և կը հաղորդեն զայն կեդրոնական Խորհուրդին և անոր վաւերացման կ'ենթարկեն :

Յօդ. 14. — Տեղական Ակումբները կը հոգան իրենց տեղային ծախքերը և կը մասնակցին կուսակցութեան բրովականտի ընդհանուր ծախքերուն, ի հարկին ամսավճարներէ զատ հասոյթի օրինաւոր ամէն միջոցներ ստեղծելով: Հասոյթներուն հարիւրին տասը վար կը դրուի աւելցուելու համար կուսակցութեան ֆօնտին:

Յօդ. 15. — Տեղական Ակումբները մէկ տարուան համար կ'ընտրեն դիւան մը, որ կը վարէ Ակումբին գործերը և որուն համարատու է:

Յօդ. 16. — Դիւանը կը բաղկանայ առնուազն երեք անդամներէ, որոնք իրենց մէջէն կ'ընտրեն նախագահ մը, քարտուղար մը և գանձապետ մը:

Յօդ. 17. — Դիւանը ամիսը գո'նէ մէկ անգամ իր օրակարգը կ'ենթարկէ Ակումբի անդամներուն խորհրդակցութեան:

Յօդ. 18. — Դիւանը Շրջանակին և կամ կեդրոնական Խորհուրդին կը հաղորդէ պարբերաբար Ակումբին գործառնութեանց և տեղական հանգամանքներու մասին տեղեկութիւններ:

Յօդ. 19. — Տեղական Ակումբները

կրնան իրենց դիւանին միջոցաւ իրարու հետ յարարերութիւն մշակել և համերաշխ դործունէութիւն մը կուսակցութեան ներդաշնակութիւնը ապահովել :

Յօդ. 20. — Տեղական ակումբները նկատի կ'առնեն կուսակցութեան կեդրոնական Խորհուրդի խորհուրդներն ու թերադրութիւնները, և պարտաւոր են դործադրել կուսակցութեան Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին որոշումները :

Յօդ. 21. — Տեղական Ակումբները համարատու են կուսակցութեան Պատգամ. Ընդհ. Ժողովին :

Յօդ. 22. — Տեղական Ակումբի մը յուժման պարագային, անոր գոյքերը կը մնան կուսակցութեան և կը դրուին Նահանգային Խորհուրդին կամ մերձաւոր Ակումբի մը և կամ կեդրոնին տրամադրութեան տակ :

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԵՐՋԱՆԱԿՆԵՐ

Յօդ. 23. — Հայաստանի վարչական բաժանումի հետեւողութեամբ կուսակցութիւնը կը բաժնուի Նահանգային Երջանակներու :

Յօդ. 24. — Նոյն շրջանակի մէջ գրտնուող Ակումբները պարտաւոր են իրարու հետ յարաբերութիւն մշակել, իրենց գործունէութեան մէջ միակերպութիւն և ներդաշնակութիւն յառաջ բերելու համար :

Յօդ. 25. — Նահանգային Շրջանակները տարին մէկ անգամ կը հրաւիրեն Նահանգային Պատգամաւորական ժողով, որ կը զբաղի նահանգային և տեղական խնդիրներով և կ'ընտրէ Նահանգային Խորհուրդ :

Յօդ. 26. — Նահանգային Խորհուրդը բաղկացած կըլլայ առնուազն 7 անդամներէ, որոնք իրենցմէ կ'ընտրեն Նախագահ, Քարտուղար և Գանձապետ :

Յօդ. 27. — Նահանգային Խորհուրդը կը գործածէ Ընդհ. և Նահանգային Պատգամ. ժողովներու որոշումները, կը վարէ շրջանակի կուսակցական գործերը և յարաբերութիւն կը պահէ կեդրոնական Խորհրուդին և ուրիշ Ակումբներու հետ :

Յօդ. 28. — Նահանգային Խորհուրդը պատասխանատու է իր շրջանակի Պատգամաւորական ժողովին, որուն կը ներկայացնէ պարբերական տեղեկագիր և իր հաշիւները :

Յօդ. 29. — Նահանգային Խորհուրդի անդամները կ'ընտրուին մէկ տարուան համար և վերընտրելի են :

Բացառիկ պարագաներուն, նահանգային Խորհուրդը կը շարունակէ պաշտօնավարել, եթէ շրջանակի Պատգմ. Ժողովի գումարումը յետաճգուի :

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 30. — Կեդրոնական Խորհուրդը կը գործադրէ կուսակցական Ընդհ. Պատգամաւորական Ժողովին որոշումները, կը վարէ կուսակցութեան գործերը, կը զբաղի ընդհանուր բրօքականտով և կուսայ իր խորհուրդները և թելադրութիւնները Շրջանակներու Խորհուրդներուն և տեղական Այլումըններուն և կը ստանայ շրջանակներու ամսական տեղեկագրերը :

Յօդ. 31. — Կեդրոնական Խորհուրդ, պիտի հրատարակէ ամսական տեղեկագիր (bulletin mensuel) մը, կամ գոնէ պիտի դրկէ բոլոր տեղական Այլումըններուն երեք ամիսը անդամ մը շրջաբերական տեղեկագիրներ, հաղորդակից ընելու համար անդամները կուսակցութեան գործունէութեան և յարակից կարեւոր անցուդարձերուն :

Յօդ. 32. — Կեդրոնական Խորհուրդը
կը բաղկանայ առնուազն 9 անդամներէ,
որոնք կ'ընտրուին կուսակցութեան Ընդհ.
Պատգամ. Ժողովէն մէկ տարուան համար,
և վերընտրելի են:

Նախընտրելի է որ Կեդրոնական Խորհուրդը
ընտրուի կուսակցութեան հիմնադիր անդամներէն:

Յօդ. 33. — Կեդրոնական Խորհուրդը
առնուազն շաբաթը անգամ մը նիստ կը
գումարէ:

Յօդ. 34. — Կեդրոնական Խորհուրդը
կ'ընտրէ իր մէջէն նախագահ մը, վոխ
նախագահ մը, ընդհ. քարտուղար մը և
երկրորդ քարտուղար մը, գանձապետ մը
համարակալ մը:

Յօդ. 35. — Ընդհ. քարտուղարը մաս-
յուն կերպով կը վարէ կուսակցութեան
գործերը և կ'ընտանայ Կեդրոնական Խոր-
հուրդէն որոշուած ռոճիկը:

Յօդ. 36. — Կեդրոնական Խորհուրդը
կը կազմէ երկու մասնախումբեր Ա. Բրո-
քականտի մասնախումբ, ընդհ. քարտու-
ղարին ատենապետութեամբ, և Բ. Տնտե-
սական մասնախումբ, գանձապետի ատե-
նապետութեամբ: Ըստ պահանջի կ'ընտրէ
նաեւ այլ մասնախումբեր:

Յօդ. 37. — Կեդրոնական Խորհուրդը իր գործառնութեանց համար դատասխանատու է կուսակցութեան Ընդհ. Պատգամ. Ժողովին :

ԸՆԴՀ. ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 38. — Ընդհ. Պատգամաւորական Ժողովը կուսակցութեան օրէնսդիր և համարառու մարմինն է :

Յօդ. 39. — Ընդհ. Պատգամաւորական Ժողովը ա. կը վերաքննէ կուսակցութեան ծրագիրը, Բ. կը գծէ կուսակցութեան բլաթֆորմը, Գ. կը լուծէ սկզբուքային հարցերը, Դ. կ'որոշէ գործելակերպի ընդհանուր գործերը :

Յօդ. 40. — Ընդհ. Պատգամ. Ժողովը կ'որոշէ նոյնպէս կուսակցութեան պիւտճէն և կը սահմանէ շրջանակներու մասնակցութեան շափը՝ կուսակցութեան ընդ. ծախքերուն :

Յօդ. 41. — Ընդհ. Պատգամ. Ժողովը կը բաղկանայ կուսակցութեան բոլոր շրջանակներու պատգամաւորներէն :

Յօդ. 42. — Իւրաքանչիւր շրջանակ կուտայ մէկ կամ արեւելի պատգամաւոր, հետեւեալ համեմատութեամբ :

50— 100	անդամ ունեցող շրջանակները կուտան	1	պատգամաւոր
100— 200		2	»
200— 400		3	»
400— 800		4	»
800—1600		5	»
1600—3200		6	»

և այսպէս շարունակաբար :

ԵԱՆՕԹ. — Կազմակերպուած Հայաստանի մէջ պատգամաւորի ընտրութիւնը կը կատարուի յւրաքանչիւր նահանգային Շրջանակի թուական համեմատութեամբ :

Յօդ. 43. — **Ընդհ. Պատգամ.** Ժողովը կը գումարուի երկու տարին անգամ մը մայրաքաղաքին մէջ կամ Կեդրոնական Խորհուրդին յարմար դատած ուրիշ մէկ վայրը :

Յօդ. 44. — **Ընդհ. Պատգամ.** Ժողովը արտասովոր նիստի կը հրաւիրուի, երբ Կեդր. Խորհուրդը կամ առնուազն վեց շրջանակներ պէտք տեսնեն :

Յօդ. 45. — **Ընդհ. Պատգամ.** Ժողովը օրինաւոր է երբ շրջանակներուն մեծամասնութիւնը ներկայացուած է : Իր որոշումները կը տրուին ձայներու մեծամասնութեամբ :

ՀԱՍՈՅԹԻ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Յօդ. 46. — Հայ Ռամկավար կուսակցութեան հասոյթի աղբիւրներն են. մուտքերը, ամսաբաժինները, հանգանակութիւններ, նուիրատուութիւններ, ներկայացում, վիճակահանութիւն և այլ օրինաւոր միջոցներ :

Ֆ Օ Ն Տ

Յօդ. 47. — Հայ Ռամկավար կուսակցութիւնը կ'ունենայ իր ֆօնտը որու համար լ'նդհ. Պատգմ. Ժողովը կը մշակէ առանձին կանոնադիր :

Յօդ. 48. — Ֆօնտին հասոյթները կը կազմեն, 1. Ակումբներու հասոյթներէն վար դրուած հարիւրին տասնէն գոյացած դումարները. 2. Ֆօնտի անունով տրուած մասնաւոր նուիրատուութիւններ, 3. լ'նդհ. Պատգմ. Ժողովի կողմէն նշանակուած մէկ անդամէն վճարելի տուրքեր՝ ըզոր անդամներու համար պարտաւիր, 4. այլ նախասահմանուած և կամ անակնկալ հասոյթներ :

Յօդ. 49. — Ֆօնտը անձեռնմխելի կը

17
918

գտնուի կեդրոնական խորհուրդի տրամադրութեան տակ, և անոր կ'իյնայ իր յարմար դատած եղանակով շահագործել զայն:


Յօդ. 50.— Տօնտին եկամուտները կը յատկացուին ա. կուսակցական բրօքականտի և քաղաքական պայքարի, բ. կուսակցութեան հրատարակութեանց նըպաստի գ. կուսակցութեան վազեմի գործիչներուն՝ և անոնց ու նահատակուած ընկերներու կարօտ ժառանգորդներուն օժանդակութեան:

ՎԵՐԱՔՆՆՈՒ ԻՒՒՆ

Յօդ. 51. — Ներկայ Առժամեայ Երազիր-Կանոնադիրը վերաքննելի է Ռամկավար կուսակցութեան Ընդհ. Պատգամաւորական ժողովին մէջ:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0321308